

Նար-Դոս

Քնքուշ լարեր

Վերջին մի փոքրիկ գլուխ

Այդ օրից անցել էր մի ամբողջ շաբաթ:

Կեսգիշեր էր:

Հարությանը նստած էր բազկաթոռի մեջ, իսկ նրա հանդեպ գահավորակի վրա՝ նրա կինը: Հարությանը նստած էր անշարժ և գլուխը խոնարհած. նա հանդարտ խոստովանության նման ինչ-որ բան էր պատմում: Կինը նստած էր նույնպես անշարժ. փոքրիկ, սիրուն գլուխը հենած ձեռքի վրա՝ նա անթարթ աչքով նայում էր սենյակի անկյունին և ամենայն ուշադրությամբ լսում էր ամուսնուն:

Պատմությունը երկար տևեց: Երբ վերջացավ, երկու ամուսիններից ոչ մեկը մի մազաչափ անգամ չփոխեց յուր դրությունը:

Լռությունը կատարյալ էր:

Վերջապես Հարությանը կամաց բարձրացրեց գլուխը և նայեց կնոջ դեմքին:

Կնոջ գեղեցիկ աչքերից հանդարտ կերպով բխում էին արտասուքի փայլուն կաթիլներ, գլորվում էին նրա գունատ այտերի վրայով և թրջում էին նրա քնքուշ, նիհար ձեռքը:

Բայց ո՞վ կարող է մեզ ասել, թե այն ի՛նչ արտասուքի կաթիլներ էին...

1887

Յաւուն Պոեմ